



ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ
2026

ՆԱԽԱԲԱՆ

Գիտական հետազոտությունը հանդիսանում է մարդկային գիտելիքի ընդլայնման գլխավոր միջոցը, մարդկային մտածողության զարգացման շարժիչ ուժը և դրսևորվում է որպես գործընթաց, որտեղ հարցն ու կասկածը վերածվում են նոր գիտելիքի, իսկ փորձը՝ տեսության: Հետազոտական գործունեությունը պահանջում է ոչ միայն համապատասխան տեսական գիտելիքներ, այլև հստակ մեթոդաբանություն, համակարգված մոտեցում և վերլուծական կարողություններ: Գիտական հետազոտության հիմքում ընկած են գիտական ազնվությունը, օբյեկտիվությունն ու անաշառությունը, որոնք հանդիսանում են յուրաքանչյուր հետազոտողի մասնագիտական էթիկայի անբաժան մասը:

Գիտական հետազոտությունների մեթոդաբանական սույն ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) պատրաստվել է Գ.Թ.Գրիգորյանի և Հ.Մ. Խաչատրյանի՝ **«Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» վերտառությամբ** ուսումնամեթոդական ձեռնարկի հիման վրա, որը նախատեսված է ուսանողների, ասպիրանտների, հետազոտողների և նոր գիտնականների համար՝ հեշտացնելու հետազոտության պլանավորման, իրականացման և արդյունքների վերլուծության գործընթացը և ներկայացնում է գիտական հետազոտության մեթոդաբանական հիմքերը, կազմակերպման սկզբունքները և կիրառելի գործիքները: Ուղեցույցը կոչված է նպաստելու գիտական մտածողության ձևավորմանը, հետազոտական մշակույթի զարգացմանը և գիտության նկատմամբ պատասխանատու, գիտակցված վերաբերմունքի արմատավորմանը:

I. ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

1. Գիտական հետազոտության բնույթը - Գիտական հետազոտությունը գործընթաց է, որի միջոցով՝

- ձեռք են բերվում նոր գիտելիքներ, կամ
- ստուգվում են արդեն գոյություն ունեցող գիտական կարծիքները:

Գիտական հետազոտությունը պետք է ունենա հստակ նպատակ և կազմակերպված քայլերի հաջորդականություն, որի հիմքում գտնվում է մեթոդաբանությունը:

Մեթոդաբանությունը (հունարեն՝ methodos - ճանապարհ, logos - ուսմունք) ուսումնասիրում է գիտական ճանաչման գործընթացի կառուցվածքը, սկզբունքները, մեթոդներն ու միջոցները: Այն ապահովում է հետազոտության տրամաբանական, տեսական և գործնական կազմակերպվածություն, նպաստում գիտության զարգացմանը և արդյունքների հավաստիությանը:

2. Մեթոդաբանության գործառույթները - Մեթոդաբանությանը բնորոշ են երեք հիմնական գործառույթ՝

1) Նորմատիվային (կարգավորող)

- Սահմանում է հետազոտության կանոնները և պահանջները,
- Ապահովում է տրամաբանական հաջորդականությունը և գիտական ճշտությունը:

2) Գիտագործնական

- Օգնում է իրական հետազոտությունների կազմակերպման և իրականացման գործընթացին,
- Նպաստում է արդյունավետ և նպատակային աշխատանքի իրականացմանը:

3) Գիտաիմացական

- Բացահայտում է գիտելիքների առաջացման օրինաչափությունները և ճանաչման կառուցվածքը,
- Աջակցում գիտության ներքին տրամաբանության բացահայտմանը:

3. Հետազոտության օբյեկտը և առարկան

Հիմնական բաղկացուցիչներ	Բովանդակություն	Օրինակ՝ անչափահասների խմբային հանցավորության ուսումնասիրություն
Օբյեկտ	Օբյեկտիվ իրականության դրսևորում, երևույթ, գործընթաց, որը պարունակում է խնդրահարույց իրավիճակ կամ հակասություն	Անչափահասների խմբային հանցավորությունը և դրա կանխարգելման ուղղությունները
Առարկա	Օբյեկտի այն հատկանիշները, կողմերը, առանձնահատկությունները, որոնք ենթակա են հետազոտության	Խմբային հանցավորության կրիմինալոգիական բնութագիրը, հանցավոր խմբերի տիպերը, անչափահասի բնութագրիչ առանձնահատկությունները, պատճառներն ու պայմանները, կանխարգելման մեթոդները

Օբյեկտը սովորաբար ավելի ընդարձակ է, իսկ առարկան՝ կոնկրետ ուսումնասիրության ուշադրության կենտրոնում գտնվող հատկանիշներ, որոնք հնարավոր է մատչելի տվյալներով դիտարկել, չափել կամ փորձարարորեն ստուգել: Հետևաբար՝ նույն օբյեկտը կարող է ունենալ բազմաթիվ առարկաներ՝ կախված նրանից, թե հետազոտողը դր հատկանիշի վրա է կենտրոնանում ուսումնասիրություն իրականացնելիս:

4. Հիմնախնդիր, նպատակ և խնդիրներ

Հիմնախնդիրը – իրականության մեջ գոյություն ունեցող և լուծում պահանջող հակասություն կամ պրոբլեմ է:

Հետազոտության նպատակը – գիտական վերջնարդյունքն է, որին ձգտում ենք հասնել հետազոտությամբ (գիտելիք, նորություն, որը պետք է ստացվի հետազոտության արդյունքում): Նպատակը ներկայացնում է գիտական խնդրի լուծման տեսլականը, ցույց է տալիս այն վերջնական գիտելիքը, նոր որակը, որը պետք է ստացվի հետազոտության արդյունքում: Հետազոտության նպատակները կարող են լինել՝ ընթացիկ և հեռանկարային, ընդհանուր, լոկալ, մշտական և դրվագային (էպիզոտիկ): Նպատակը չի կարող լինել «գործողություն» կամ «ընթացք», այլ պետք է ստանա ճիշտ ձևակերպում և արտահայտի արդյունք, օգտագործելով բանալի-բառեր՝ բացահայտել, ուսումնասիրել, սահմանել, մշակել, կարգավորել (համակարգել), հիմնավորել:

Հետազոտության խնդիրները – կոնկրետ քայլեր, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար և պետք է լինեն տրամաբանական, հաջորդական, վերահսկելի, չափելի: Օրինակ՝ անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման ուսումնասիրության դեպքում.

✓ **Նպատակ** կարող է լինել դրա կրիմինալոգիական վերլուծությունը և կանխարգելման առաջարկությունների մշակումը,

✓ **խնդիրներ**՝ հասկացության սահմանումը, վիճակի և կառուցվածքի վերլուծությունը, խմբերի տիպերի առանձնացումը, պատճառների բացահայտումը և գործնական առաջարկությունների ներկայացումը:

Այսպիսով՝ չպետք է շփոթել «նպատակը» և «խնդիրները», քանի որ նպատակը՝ վերջնական արդյունքի որակյալ նկարագիրն է, իսկ խնդիրները՝ կոնկրետ քայլեր, որոնցով մոտենում ենք նպատակին:

5. Հետազոտական մոտեցումներ - այն ելքային դիրքը կամ նախնական տեսանկյունը, որը որոշում է հետագա մեթոդների ընտրությունը: Այն պետք է համապատասխանի թեմային և նպատակին: Հիմնական մոտեցումներն են՝ համակարգային, ոլորտային, հայեցակարգային, էմպիրիկ, պրագմատիկ և գիտական:

- **Համակարգային մոտեցումը** դիտարկում է խնդիրը համակարգի ամբողջականության ու փոխկապակցվածության համատեքստում և բացահայտելով գլխավորն ու էականը՝ որոշում է ոլորտների միջև կապերի բնույթը, դրանց բնութագիրը: Այս մոտեցման կարևոր նախապայմանը համակարգի սահմանների նախնական որոշումն է, այսինքն՝ ինչն ենք ներառում համակարգի մեջ և ինչն ենք դիտարկում որպես համակարգից դուրս գտնվող գործոն:
- **Ոլորտային մոտեցումը** կենտրոնանում է մեկ կոնկրետ ոլորտի վրա՝ ապահովելով խորքային վերլուծություն: Այս մոտեցումն ինչ որ սկզբունքով հիմնախնդրի մեկ սահմանի ընտրությունն է՝ հաշվի առնելով դրա արդիականությունը կամ հետազոտության համար հատկացված միջոցները:
- **Հայեցակարգային մոտեցումը** հիմնված է հետազոտության ընդհանուր ուղղվածությունը որոշող հիմնական դրույթների և սկզբունքների համակարգի ձևավորման վրա: Այն սահմանում է գիտական ուսումնասիրության դաշտը, հիմնարար կատեգորիաների իմաստային բովանդակությունը, ուսումնասիրվող երևույթի նախնական մոդելը, հիմնական հարցերը, գաղափարները և մեթոդաբանական ուղղությունները: Հայեցակարգային մոտեցման շրջանակում հետազոտողը նախապես ձևակերպում է էական հարցերի շրջանակը, ենթադրյալ փոխկապակցումները, գիտական սահմանումները, գաղափարները (մտահղացումները), որոնք պետք է գործի դրվեն, ինչպես նաև տվյալների հավաքագրման, վերլուծության մեթոդների ընտրության և արդյունքների մեկնաբանման շրջանակները:
- **Էմպիրիկ մոտեցումը** հիմնվում է փորձի և իրական տվյալների վրա, որոնք դիտարկելու, համեմատելու, ստուգելու արդյունքում ստացվում են եզրահանգումներ: Այսինքն՝ էմպիրիկ մոտեցումը գիտելիք չի ստանում նախապայմաններով, այլ ձեռք է բերվում իրական փորձից, որը որքան բազմազան և կրկնվող է, այնքան ուժեղ է համարվում:
- **Պրագմատիկ մոտեցումը** ուղղված է առաջիկա արդյունքի ստացմանը և գնահատում է գիտելիքի օգտակարությունը՝ իրական խնդիրների լուծման համար: Այս մոտեցման մեջ գնահատվում է հետևանքը. ցանկալի արդյունք, որը կհամարվի օգտակար և ավելի նախընտրելի:

- **Գիտական մոտեցումը** պահանջում է, որ սահմանվող թեման լինի նախ հստակ, չափելի և ստուգելի, որից հետո ընտրվում են այնպիսի մեթոդներ, որոնք թույլ են տալիս նյութն ուսումնասիրել հնարավորինս անաչառ:

Գործնականում հետազոտության արդյունավետությունը մեծանում է ոչ թե մեկ մոտեցման «մաքուր» կիրառման, այլ տարբեր մոտեցումների համադրման դեպքում, որոնք տվյալ խնդրի համար առավել նպատակահարմար են:

6. Հետազոտության մեթոդներն ու միջոցները: Մեթոդները և միջոցներն այն գործիքներն են, որոնց միջոցով հավաքվում են տվյալներ, վերլուծվում են երևույթներ, ձևավորվում են եզրակացություններ: Դրանք կարող են լինել դիտարկումներ, հարցումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձարկումներ կամ հետազոտության հիմնական նպատակին ծառայող այլ մեթոդներ, որոնք պետք է ապահովեն հավաստի, համադրելի և ստուգելի արդյունքներ:

II. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հետազոտության մեթոդաբանական սկզբունքները

Հետազոտության արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է առաջնորդվել մի շարք հիմնարար մեթոդաբանական սկզբունքներով: Դրանք ոչ միայն տեսական դրույթներ են, այլ նաև գործնական կողմնորոշիչներ, որոնք օգնում են կառուցել հետազոտության տրամաբանությունը:

1) Հակասության սկզբունք - յուրաքանչյուր գիտական հետազոտությունն ծագում է հակասությունից՝

- ցանկալիի և հնարավորի,
- հայտնիի և պահանջվածի,
- առկա գիտելիքի և իրական պահանջների միջև:

Հակասության բացահայտումն է հանդիսանում հետազոտության մեկնարկային կետը: Առանց հակասության չկա հիմնախնդիր, իսկ առանց հիմնախնդրի՝ չկա գիտական որոնում:

2) Գնահատման սկզբունք - յուրաքանչյուր երևույթ կամ իրադրություն պետք է գնահատվի ըստ՝

- կարևորության,
- արդիականության,
- բարդության,
- այլ երևույթների հետ կապերի:

Այս սկզբունքը թույլ է տալիս տարբերակել առաջնային և երկրորդային խնդիրները և կենտրոնացնել ռեսուրսները առավել էական ուղղության վրա:

3) Ճանաչման սկզբունք - երևույթի պատկանելիության որոշում ըստ կոնկրետ տիպային դասի՝

- նույնացման,
- համեմատելու,
- դասակարգելու միջոցով, առանց որի գիտական վերլուծությունը դառնում է անկանոն, չհամակարգված և առանց կառուցվածքի:

4) Գործողության (պրոցեսուալ) սկզբունք - հետազոտությունը մեկ քայլով իրականացվող գործողություն չէ: Այն՝

- փուլային,
- շրթայական,
- շարունակաբար բարելավվող գործընթաց է:

Այս սկզբունքը պահանջում է հետազոտությունը դիտարկել որպես զարգացող համակարգ, այլ ոչ թե մեկանգամյա գործողություն:

5) Հաստատելիության և ստուգելիության սկզբունք - գիտական արդյունքն արժեք ունի միայն այն դեպքում, երբ այն՝

- ստուգելի է,
- վերահաստատելի է,
- վերահսկելի է՝ անկախ հետազոտողից:

2. Հիմնախնդիրը՝ որպես հետազոտության առանցք

Յուրաքանչյուր հետազոտության հիմքում ընկած է հիմնախնդիրը: Գիտահետազոտական համատեքստում այն պարզապես հարց չէ, այլ՝ հակասության արդյունքում առաջացած անորոշություն, որտեղ առկա գիտելիքը բավարար չէ այն մեկնաբանելու, կանխատեսելու կամ կառավարելու համար: Այսինքն՝ հետազոտողը չի «հանդիպում» հիմնախնդրին, այլ հիմնախնդիր է կառուցում այնտեղ, որտեղ առկա գիտելիքը այլևս չի կարողանում բավարար բացատրություն տալ, իսկ հիմնախնդրի լուծումը պահանջում է որոշել՝

- կիրառվող մեթոդները,
- ընտրված մոտեցումները,
- օգտագործվող միջոցները,
- ենթադրվող արդյունքները,
- սահմանափակումներն ու կողմնորոշիչները:

Հիմնախնդիրն անհրաժեշտ է տարբերել խնդրից. խնդիրը միշտ ունենում է լուծման քայլեր, սխեմաներ, իսկ հիմնախնդիրը պահանջում է դրանց ստեղծում՝ նոր տարրերով, այնպիսի փոփոխություններով, որոնք նախկինում հայտնի չէին, պատճառահետևանքային հարաբերությունների բացահայտում, սահմանների հստակ ձևակերպում:

★ Հիմնախնդիրների դասակարգում

1) Կախված խորությունից ճանաչողության առումով հիմնախնդիրները բաժանվում են երեք դասի՝

- **Համակարգված (քանակապես ձևակերպված)** - արտահայտվում են թվերով, սիմվոլներով, թվային գնահատականներով.
- **Չհամակարգված (որակապես արտահայտված)** - բովանդակում են կարևորագույն ռեսուրսների նկարագրություն, հատկանիշներ ու բնութագրումներ, որոնց միջև քանակական կախվածությունը հայտնի չէ,
- **Խառը հիմնախնդիրներ** - ներառում են և՛ քանակական, և՛ որակական տարրեր, ընդ որում, հիմնախնդրի քիչ հայտնի և անորոշ կողմերն ունեն գերիշխելու միտում:

★ Ըստ զարգացման աստիճանի տարբերվում են՝

- **Չզարգացած հիմնախնդիրներ** – ծագում են որոշակի տեսության, հայեցակարգի հիմքով, բարդ են, ոչ ստանդարտ, որոնց լուծումն ուղղված է ճանաչողության գործընթացում առաջացած հակասության վերացմանը:
- **Զարգացած հիմնախնդիրներ** – լուծման հնարավոր ուղիները որոշ չափով արդեն ուրվագծված են:

Եթե հիմնախնդիրը չի սահմանվում, այն չի կարող դառնալ հետազոտության օբյեկտ: Որակյալ հիմնախնդիրն այն է, որի սահմանումը թույլ է տալիս նախագծել ապագա մեթոդը:

★ Ըստ զարգացման աստիճանի տարբերվում են՝

- **Չզարգացած հիմնախնդիրներ** – ծագում են որոշակի տեսության, հայեցակարգի հիմքով, բարդ են, ոչ ստանդարտ, որոնց լուծումն

ուղղված է ճանաչողության գործընթացում առաջացած հակասության վերացմանը:

- **Զարգացած հիմնախնդիրներ** – լուծման հնարավոր ուղիները որոշ չափով արդեն ուրվագծված են:

Եթե հիմնախնդիրը չի սահմանվում, այն չի կարող դառնալ հետազոտության օբյեկտ: Որակյալ հիմնախնդիրն այն է, որի սահմանումը թույլ է տալիս նախագծել ապագա մեթոդը:

★ Հիմնախնդրի մեթոդաբանական պարամետրերը

1) Հիմնախնդրի որակը - որակյալ հիմնախնդիրը պետք է ունենա՝

- արդիականություն,
- սահմանելիություն (օբյեկտ, սուբյեկտ, հստակ սահմանված հակասություն),
- լուծման հնարավորություն,
- ենթադրվող արդյունք:

2) Հիմնախնդրի որոշումը (ճանաչումը) - պահանջում է փոխկապակցված գործընթացներ՝

Ա. Հիմնախնդրի ձևակերպում՝

- ▶ հարցում՝ հետազոտման հարցի առաջ քաշում,
- ▶ հիմնախնդրի հիմքում ընկած հակասության ամրագրում,
- ▶ ենթադրվող արդյունքի նկարագրում:

Բ. Հիմնախնդրի «կառուցում»՝

- ▶ շերտավորություն (ենթահարցերի բաժանում),
- ▶ կազմություն (ենթահարցերի լուծման հաջորդականության որոշում և խմբավորում),
- ▶ տեղայնացում (համապատասխան ուսումնասիրման դաշտի սահմանում),
- ▶ տարբերակում՝ հարցերը փոփոխելու հնարավորության այլընտրանքի որոնում:

Գ. Հիմնախնդրի գնահատում՝

- ▶ կողիֆիկացիա՝ անհրաժեշտ պայմանների վերհանում, ներառյալ մեթոդներ, միջոցներ,
- ▶ ցուցակագրում՝ առկա հնարավորությունների, ռեսուրսների ստուգումը,

- ▶ կոգնիֆիկացիա՝ հիմնախնդրության աստիճանի վերհանում, այն հայտնի կամ անհայտ տեղեկատվության հարաբերակցությունը, որն անհրաժեշտ է օգտագործել հետազոտության ընթացքում (օրինակ՝ եթե լինի հնարավորություն, արդյոք կլինի ցանկություն սովորելու),
- ▶ համեմատում՝ հիմնախնդրի լուծման հայտնաբերումը համանման արդեն լուծված հիմնախնդրից,
- ▶ որակավորում՝ հիմնախնդրի դասումը որոշակի տիպի:

Դ. Հիմնախնդրի հիմնավորումը՝

- ▶ էքսպոզիցիա (արժեքավորության ցուցադրում),
- ▶ արդիականացում (օգտակարության փաստարկների առաջ քաշում),
- ▶ կոմպրոմետացիա (քննադատական վերլուծություն, առարկությունների առաջ քաշում),
- ▶ դեմոնստրացիա (ստացված արդյունքների օբյեկտիվ սինթեզ, ցուցադրում):

Ե. Հիմնախնդրի նշում՝

- ▶ հասկացությունների մեկնաբանություն, ճշգրտում,
 - ▶ ինտիմիզացիա՝ ձևակերպման:
- Գործողությունների վերը թվարկված կարգը հանդիսանում է տիպային հիմնախնդրի որոշման համար, սակայն, օպերացիաների առկայությունն ու հաջորդականությունը կարող են փոփոխվել՝ պայմանավորված հետազոտողի փորձով և որակավորմամբ:

★ Հիմնախնդրի առաջ քաշման պահանջները

Հիմնախնդրի առաջադրումը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

- 1. արձանագրի հակասությունը** – (նշվի ինչն է սխալ, այլ ոչ թե՛ ինչու է սխալ),
- 2. լինի ֆոկուսավորված** – հստակ ցույց տա տարբերությունը «ինչ կա» և «ինչ պետք է լինի»:
- 3. լինի չափելի** – հնարավոր լինի գնահատել դրա ազդեցությունը և կարևորությունը բացարձակ և հարաբերական ցուցանիշներում (ժամանակ, ռեսուրս, ծավալ արդյունավետություն և այլն):
- 4. լինի ճշգրիտ ձևակերպված** – բացառի երկիմաստությունը:
Որքան հիմնախնդիրը համապատասխանում է այս պահանջներին, այնքան այն դառնում է ավելի գիտականորեն արժեքավոր:

III. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄԸ

1. Հիպոթեզը՝ որպես հետազոտության հիմք

Հիպոթեզը պատճառի մասին ենթադրության ստուգման և ապացուցման պահանջն է, որն առաջացնում է որոշակի քննություն՝ հետազոտվող օբյեկտների կառուցվածքի և կառուցվածքային տարրերի արտաքին և ներքին կապերի բնույթի վերաբերյալ: Ոչ բոլոր ենթադրություններն են համարվում հիպոթեզ, այլ միայն նրանք, որոնք հիմնված են գիտելիքի վրա, որի արդյունքում առաջ է քաշվում այդ ենթադրությունը: Այն հանդիսանում է հավանական գիտելիք, որը ենթակա է փորձառական ստուգման:

Հիպոթեզին ներկայացվող հիմնական պահանջները - հիպոթեզը պետք է՝

1. Համապատասխանի այն փաստերին, որոնց վրա հենվում է,
2. Լինի փորձառականորեն ստուգելի և համադրելի տվյալների հետ,
3. Համատեղելի լինի առկա գիտական գիտելիքի հետ,
4. Ունենա բացատրական ուժ,
5. Լինի պարզ ձևակերպված:

Հիպոթեզների տեսակները - Տարբերվում են՝

- **Նկարագրական** - գործող օբյեկտների հատկանիշների, ուսումնասիրվող օբյեկտի առանձին տարրերի միջև կապերի բնույթի վերաբերյալ ենթադրությունն է,
- **Բացատրական հիպոթեզ** - պատճառահետևանքային կապերի վերաբերյալ ենթադրությունն է,
- **Կանխատեսվող հիպոթեզ** - ուսումնասիրվող օբյեկտի զարգացման օրինաչափությունների և միտումների վերաբերյալ ենթադրությունն է:

Հիպոթեզի կառուցման փուլերը - Հիպոթեզի կառուցումն անցնում է որոշակի փուլերով՝

1) Հիպոթեզի առաջ քաշում. Ձևակերպման որակից կախված է հետագա ստուգման արդյունավետությունը: Հիպոթեզը պետք է՝

- տրամաբանորեն համապատասխանի հետազոտական հիմնախնդրին և նպատակին,
- հանդիսանա կցված տվյալների և նախնական վերլուծության բնականոն շարունակություն,
- ներառի էմպիրիկ ստուգման հնարավորության հստակ պատկերացում,
- լինի հստակ, չափելի, արտահայտի փոփոխությունների միջև ենթադրվող կապը:

2) Հիպոթեզի ձևակերպում - Հիպոթեզի ձևակերպումը պետք է լինի՝

- հստակ, միանշանակ, տրամաբանական,
- չափելի, գնահատելի,
- հստակ սահմանված հասկացություններով,
- փոփոխությունների միջև ենթադրվող կապի բնույթի բացահայտումով (պատճառահետևանքային, կորելացիոն, համեմատական, որակական և այլն):

Լավ ձևակերպված հիպոթեզը պետք է լինի ոչ միայն ստուգելի, այլև հերքելի. այն պետք է հնարավորություն տա ձևակերպել հակադրություն, համահունչ լինի գոյություն ունեցող տեսական հիմքերին և նախկինում իրականացված ուսումնասիրություններին: Ձևակերպման որակից կախված է հետագա ստուգման արդյունավետությունը:

3) Հիպոթեզի ստուգում - հիպոթեզի ճշգրտության ստուգումը թույլ է տալիս պարզել՝ արդյոք առաջ քաշված ենթադրությունը համապատասխանում է իրականությանը և օբյեկտիվ տվյալներին: Հիպոթեզի ստուգումն իրականացվում է՝

- տվյալների հավաքագրմամբ,
- դիտարկմամբ կամ փորձարարությամբ,
- արդյունքների վերլուծությամբ և հաստատմամբ:

Հաստատված հիպոթեզը դեռևս վերջնական ճշմարտություն չէ. այն պահանջում է տարբեր պայմաններում բազմակի վերաստուգում և վերահաստատում, որպեսզի դառնա կայուն գիտելիք, իսկ չհաստատված հիպոթեզը կարող է դառնալ նոր հիմնախնդիր, նոր ուսումնասիրության հիմք:

2. Հետազոտության հայեցակարգը. Հետազոտության հայեցակարգը մեթոդաբանական դրույթների համալիր է, որը սահմանում է հետազոտման մոտեցումներն ու դրա անցկացման կազմակերպումը: Այն ոչ միայն տեսական հայացքների համակարգ է, այլ նաև հետազոտության կազմակերպման ռազմավարական ծրագիր: Հայեցակարգի հիմնական գործառույթներն են՝

1. միավորել նպատակները, խնդիրները, հիպոթեզները և մեթոդները մեկ համակարգում,
2. ապահովել հետազոտության ներքին տրամաբանական կառուցվածքը,
3. հստակեցել սահմանափակումներն ու պայմանները,
4. նախանշել հնարավոր ռիսկերը և դրանց հաղթահարման ուղիները:

Հայեցակարգի կոնկրետացումը, որպես կանոն, արտացոլվում է հետազոտության պլանում: Հիպոթեզի կամ հայեցակարգի առկայությունը բնութագրում է գիտական մոտեցման բարձր մակարդակը:

IV. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ

Հետազոտության մեթոդաբանական գործողությունների քարտեզը հետազոտական գործընթացի կառուցվածքային և տրամաբանական սխեման է, որը միավորում է հայեցակարգը, հիպոթեզները, հիմնախնդիրը, նպատակներն ու խնդիրները, մեթոդները, սվյալների մշակումը և արդյունքների ձևակերպումը: Այն ապահովում է հետազոտության հետևողականությունը, կազմակերպվածությունը և նպատակային իրականացումը: Քարտեզը ցույց է տալիս՝ **ինչից սկսել, ինչ հերթականությամբ շարժվել և ինչ արդյունքի հասնել:**

1. Հիմնական (տիպային) հետազոտությունների մեծ մասի համար կիրառելի քարտեզն ունի հետևյալ հաջորդականությունը.

1. թեմայի ընտրությունը և արդիականության հիմնավորում,
 2. հետազոտության նպատակի և խնդիրների որոշում,
 3. հետազոտության օբյեկտի և առարկայի որոշում,
 4. հետազոտության անցկացման մեթոդի կամ մեթոդիկայի մշակում,
 5. սվյալների հավաքագրման սկզբունքների և աղբյուրների որոշում,
 6. հետազոտական գործիքների մշակում,
 7. էթիկական նորմերի ապահովում,
 8. հետազոտական գործընթացի նկարագրություն ու անցկացում,
 9. սվյալների մշակում և թվային վերլուծություն,
 10. արդյունքների մեկնաբանում և կապը հիպոթեզի հետ,
 11. հետազոտական արդյունքների վերլուծություն,
 12. գիտական նորույթի ձևակերպում,
 13. եզրահանգումների (գնահատականի) ձևակերպում,
 14. առաջարկությունների և հետագա հետազոտության ուղղությունների ներկայացում,
 15. աշխատանքի հրապարակում և ներկայացում:
- Այս քարտեզը ապահովում է հետազոտության ամբողջական և համակարգված իրականացումը:

2. Այլընտրանքային ռազմավարական քարտեզներ

Որոշ ոլորտներում, հատկապես կոնկրետ խնդիրների լուծմանն ուղղված կիրառական հետազոտություններում, գործընթացը կարող է զգալիորեն

կրճատվել՝ պահպանելով միայն հիմնական ֆունկցիոնալ տրամաբանությունը: Այս տեսանկյունից հետազոտության տեսակից և նպատակից կախված՝ կարող են կիրառվել տարբեր գործընթացային սխեմաներ:

1) Հիմնախնդիր – հիպոթեզ – լուծում. կիրառվում է այն դեպքերում, երբ հետազոտության նպատակը կոնկրետ հիմնախնդրի բացահայտումն ու դրա մեթոդական լուծման որոնումն է:

2) Հիպոթեզ – մոդել – հիմնախնդիր – հանձնարարականներ. կիրառվում է մոդելային և վերլուծական հետազոտություններում. ձևակերպվում է ենթադրյալ հիպոթեզ, ստեղծվում է քննադատական կամ գործնական մոդել, որը թույլ է տալիս բացահայտել հիմնախնդիրը և առաջարկել կոնկրետ հանձնարարականներ, քայլեր:

3) Մոդել – խնդիր – կրթություն – լուծում. օգտագործվում է կրթության, դիդակտիկ և ուսումնական տեխնոլոգիաների ոլորտներում. ձևավորվում է մոդել, որի հիման վրա նույնականացվում է խնդիրը, այնուհետև նշանակվում են կրթական միջամտություններ, վերջում առաջարկվում է լուծում:

4) Վերլուծություն – հիպոթեզ – հիմնախնդիր – լուծում – հայեցակարգ. կիրառվում է խորը վերլուծական հետազոտություններում. գործընթացը սկսվում է նախնական վերլուծությամբ, որը թույլ է տալիս առաջ քաշել հիպոթեզ և հստակեցնել հիմնախնդիրը, ձևակերպել հայեցակարգ:

5) Հիմնախնդիր – վերլուծություն – հիպոթեզ – մեթոդ – արդյունքներ – գնահատում. օգտագործվում է կիրառական գիտությունների համար. տվյալների նախնական հավաքագրում և վերլուծություն՝ մինչև հիպոթեզի առաջադրումը: Թույլ է տալիս ստանալ հետազոտության արդյունավետության հստակ գնահատական:

6) Հայեցակարգ – մոդել – փորձարկում – վերլուծություն – ճշգրտում. օգտագործվում է ռազմավարական, կառավարչական, տնտեսական և ինժեներական հետազոտություններում, ընդգծված հետադարձ կապի մեխանիզմով՝ մոդելի փորձարկումից հետո դրա ճշգրտում:

7) Տեսություն – հիմնախնդիր – մեթոդ – փորձարարություն – եզրակացություններ – առաջարկություններ. բնորոշ է փորձարարական գիտություններին, որտեղ ենթադրությունները պետք է հաստատվեն փորձարկումներով: Արդյունքները հանգեցնում են թե՛ տեսական ընդհանրացումների և թե՛ կիրառական առաջարկությունների:

8) Հիմնախնդիր – տվյալների հավաքագրում – մշակում – հիպոթեզ – ստուգում – լուծում. օգտագործվում է սոցիոլոգիայի, հոգեբանության, վիճակագրության և տվյալահենք գիտություններում: Տվյալների նախնական մշակումն ուղղակիորեն ազդում է հիպոթեզի ձևակերպման վրա:

9) Մոդել - սցենար - փորձարկում - ռիսկերի գնահատում - առաջարկություններ. արդյունավետ է տնտեսական, անվտանգության, ռազմավարական պլանավորման ոլորտներում, որտեղ կարևոր է ոչ միայն լուծումը, այլև դրա ռիսկային հետևանքների կանխատեսումը:

10) Կազուս - վերլուծություն - համեմատություն - եզրահանգում. օգտագործվում է իրավաբանական և դեպքահեն (case study) հետազոտություններում՝ կոնկրետ դեպքի միջոցով ընդհանուր օրինաչափություններ բացահայտելու համար:

11) Գաղափար - նախագիծ - իրականացում - դիտարկում - գնահատում - բարելավում. բնորոշ է նախագծային և կրթական ծրագրերի մշակման ոլորտին: Սխեման ընդգծում է պրոցեսի շրջանաձևությունը (ցիկլը) և շարունակական բարելավման սկզբունքը:

3. Գիտական արդյունք. գիտական գործունեության արգասիքը, որը պարունակում է նոր գիտելիք կամ լուծում և կարող է լինել՝

✓ անմիջական՝ արտահայտվել որպես հանձնարարական, մոդել, ծրագիր, մարտավարություն, լուծում, մեթոդիկա, կազմակերպման տեսակ, տեխնոլոգիա, շարժառիթների, վերահսկողական, գնահատման, հակառիսկերի համակարգ և այլն,

✓ միջնորդավորված (արդյունքներն ըստ էության)՝ արդյունավետություն, սոցիալ-հոգեբանական մթնոլորտ, եկամուտ, գործունեության մոդելավորում և այլն:

★ Ըստ նշանակության գիտական արդյունքները դրսևորվում են՝

- **Հիմնական արդյունքներ** – ուղղակիորեն բխում են նպատակից և լուծում են նրա հիմնարար գիտական կամ կիրառական խնդիրը,
- **Լրացուցիչ արդյունքներ** – ուղեկցող, աջակցող արժեք ունեն, կարող են արտահայտվել նոր տվյալների բազայի ստեղծումով, լրացուցիչ վերլուծական նյութեր հավաքելով, համագործակցության հարթակների ձևավորումով, հետազոտական գործիքների կատարելագործմամբ, մասնագիտական կարողությունների զարգացմամբ:

★ Ըստ յուրացման ձևի արդյունքները դրսևորվում են՝

- **Տեսական արդյունքներ** – ուղղված գիտելիքի ընդլայնմանը՝ տեսական մոդելներ, գիտական բացահայտումներ, սկզբունքներ, հայեցակարգեր և այլն,
- **Գործնական արդյունքներ** – ուղղված գիտելիքի անմիջական կիրառմանը՝ մեթոդիկա, ծրագիր, գործընթացի բարելավում, ռազմավարություն և այլն:

★ Ըստ նորության մակարդակի արդյունքները դրսևորվում են .

- **Բացարձակ նորություն**, որը գիտության մեջ նախկինում գոյություն չի ունեցել,
- **Հիմնական նորություն**, որը հիմնված է արդեն գոյություն ունեցող գիտելիքի վրա, սակայն այն վերահիմաստավորում, ընդլայնում կամ կատարելագործում է՝ ապահովելով գիտական առաջընթացի շարունակականությունը:

★ Ըստ կիրառելիության չափի արդյունքները դրսևորվում են .

- **Հիմնարար** - ունեն տեսական խորություն, սակայն անմիջական կիրառումը կարող է երկարաժամկետ լինել,
- **Կիրառական** - կիրառելի են կոնկրետ ոլորտում, ապահովում են արագ, չափելի ազդեցություն,
- **Նախագծային** (պիլոտային) մշակված են փորձարարական մակարդակով՝ հետագա կիրառման նպատակով:

★ Ըստ ազդեցության բնույթի արդյունքները դրսևորվում են .

- **քանակական արդյունքներ**- չափելի են տվյալների, ցուցանիշների, տնտեսական կամ վիճակագրական գործակիցների միջոցով,
- **որակական արդյունքներ** - չափվում են միջավայրի, վարքի, հարաբերությունների կամ երևույթների փոփոխությունների միջոցով:

★ Ըստ ներկայացման ձևի արդյունքները դրսևորվում են .

- Գիտական հոդված
- Զեկույց կամ հաշվետվություն
- Մեթոդական ձեռնարկ կամ Ուսումնական նյութ
- Ծրագրային ապահովում
- Ռազմավարական փաստաթուղթ
- Քաղաքականության առաջարկություն,
- Մոդել կամ սիմուլյացիա:

★ Ըստ իրականացման փուլերի արդյունքները դրսևորվում են .

- **Նախնական** - ստացվում են հետազոտման ընթացքում, հիմք են դրանից բխող հաջորդ քայլերի համար,
- **Միջանկյալ** - արտացոլում են գործընթացի ընթացիկ առաջընթացը,
- **Վերջնական** - ամփոփում են ամբողջ հետազոտությունը և ձևակերպում են ընդհանուր եզրահանգումները:

Այսպիսով՝ հետազոտության մեթոդաբանական գործողությունների քարտեզը գիտական աշխատանքի կազմակերպման առանցքային գործիքն է, որը ոչ միայն ուղղորդում է հետազոտությունը, այլև բարձրացնում դրա գիտական արժեքը, չափելիությունը և կիրառելիությունը:

V. ՊՐԱԿՏԻԿԱ ԵՎ ՃԱՆԱՀՈՂՈՒԹՅՈՒՆ

Պրակտիկան և ճանաչողությունը նույն գործընթացի փոխկապակցված կողմերն են: Ճանաչողությունը տեսական գործունեություն է, սակայն դրա առաջացումը, զարգացումը և ստուգումը պայմանավորված է պրակտիկայով: Պրակտիկան իրենից ներկայացնում է ամբողջական համակարգ՝ ընդգրկելով մարդկության նյութական ու հոգևոր գործունեության բոլոր ձևերն ամբողջ պատմական զարգացման ընթացքում, որի հիմնական ձևերն են՝

1. **Նյութական արտադրություն** (աշխատանք),
2. **Սոցիալական գործունեություն,**
3. **Գիտական փորձարկում** (ակտիվ և նպատակային միջամտություն իրականությանը):

Պրակտիկայի դերակատարությունը գիտական ճանաչողության մեջ՝

✓ **Գիտելիքի աղբյուր** - գիտելիքների մեծ մասը ծագել է գործնական պահանջներից. այն ձևավորում է գիտական խնդիր և ուղղորդում ուսումնասիրությունը:

✓ **Շարժիչ ուժ** - պրակտիկան առաջադրում է նոր հարցեր, ապահովում է տեխնիկական միջոցներ և խթանում գիտության զարգացումը:

✓ **Նպատակ** - գիտական ճանաչողությունը ինքնանպատակ չէ. այն ծառայում է մարդկային գործունեության կատարելագործմանը: Գիտելիքը վերադարձվում է պրակտիկային՝ դառնալով կիրառելի միջոց:

✓ **Ճշմարտության չափանիշ** - պրակտիկան որոշում է՝ տեսությունը համապատասխանում է իրականությանը, թե ոչ:

Ժամանակակից մեթոդաբանությունում գիտական դրույթների ստուգման գործընթացը հիմնվում է երկու առանցքային սկզբունքների վրա՝ **վերեֆիկացիա** և **ֆալսիֆիկացիա**:

1. Վերեֆիկացիա (verificare – ապացուցել ճշմարտությունը) նշանակում է գիտական պնդումների ճշմարտացիության հաստատում՝ դրանց էմպիրիկ ստուգման միջոցով: Վերեֆիկացիայի հիմնական պահանջները.

- ▶ տեսական դրույթներն համապատասխանեցում էմպիրիկ փաստերին,
- ▶ ստուգում՝ դրանց համապատասխանությունն իրականությանը փորձի միջոցով,
- ▶ համադրություն գիտելիքի ընդունելիության այլ չափանիշների հետ՝ էվրիստիկական արժեք, բացատրական ուժ, տրամաբանական պարզություն, ներքին համակարգվածություն և այլն:

2. Ֆալսիֆիկացիա (լատ. falsificatio կեղծել, հերքել) նշանակում է հիպոթեզի կամ տեսության քննադատական ստուգում՝ դրանց հնարավոր հերքման միջոցով: Այս մոտեցումը շեշտադրում է ոչ թե տեսության «վերջնական հաստատումը», այլ դրա համարձակ բախումը փորձին՝ բացառելու համար սխալները: Ֆալսիֆիկացիայի հիմնական պահանջները.

- ▶ տեսության այնպիսի ձևակերպում, որպեսզի հնարավոր լինի այն փորձով հերքել,
- ▶ սխալվելու հնարավորությունը՝ որպես գիտության առաջընթացի կարևոր պայման,
- ▶ գիտության զարգացման հիմքում տեսությունների քննադատական փորձարկումն ու հստակ սահմանի անցկացումը գիտության և ոչ-գիտության միջև:

Այս մոտեցումը շեշտում է, որ գիտական արդյունքը վերջնական չէ. այն դինամիկ և պատմականորեն զարգացող համակարգ է, բաց է վերանայման համար և ունի.

- ✓ **անցյալ**՝ կուտակված փորձի, մեթոդների և գաղափարների տեսքով,
- ✓ **ներկա**՝ գործող տեսությունների, մեթոդաբանական մոտեցումների, քննադատական վերլուծությունների շրջանակում,
- ✓ **ապագա**, որը ձևավորվում է նոր գիտական որոնումներով, մեթոդներով, տեխնոլոգիական առաջընթացով և բացահայտումներով:

VI. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՇԱՐԱԴՐՄԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԸ

Գիտական աշխատանքը, որպես որակավորված հետազոտական արդյունք, գնահատվում է ոչ միայն իր գիտական արժեքով՝ տեսական և գործնական նշանակությամբ, թեմայի արդիականությամբ ու ստացված արդյունքների կիրառական կարևորությամբ, այլև աշխատանքի մեթոդական մշակվածությամբ, որն առաջին հերթին արտահայտվում է

աշխատանքի կառուցվածքային հստակությամբ:

Չկա գիտական աշխատանքի կառուցվածքի ընտրության միասնական պարտադիր ձևաչափ, քանի որ յուրաքանչյուր հեղինակ ազատ է ընտրել նյութի շարադրանքը, սակայն այդ ազատությունը չի բացառում ընդունված չափանիշներին համապատասխանելու անհրաժեշտությունը: Կառուցվածքային կանոնների պահպանումը ապահովում է հետազոտության տրամաբանական շարունակականություն, հստակություն և նյութի ընկալման մատչելիություն:

1. Գիտական աշխատանքի ավանդական կառուցվածքը

Ակադեմիական պրակտիկայում ձևավորվել է գիտական աշխատանքի որոշակի կառուցվածքային մոդել, որը ներառում է հետևյալ հիմնական տարրերը.

- 1.Տիտղոսաթերթ.
- 2.Բովանդակություն.
- 3.Ներածություն.
- 4.Հիմնական մասի գլուխներ.
- 5.Եզրակացություն.
- 6.Մատենագիտական ցանկ.
- 7.Հավելվածներ.
- 8.Օժանդակ ցուցիչներ.

• **Տիտղոսաթերթ** - գիտական աշխատանքի առաջին և պաշտոնական էջն է, որը լրացվում է խիստ սահմանված կանոնների պահպանմամբ: Տիտղոսաթերթի կենտրոնում ներկայացվում է աշխատանքի վերնագիրը, որը պետք է լինի հակիրճ, ճշգրիտ և արտահայտի աշխատանքի հիմնական բովանդակությունը: Բացի վերնագրից, պարտադիր նշվում են՝

- ✓ հետազոտողի անունը և ազգանունը,
- ✓ ուսումնական հաստատության կամ գիտական կազմակերպության անվանումը,
- ✓ մասնագիտությունը,
- ✓ գիտական ղեկավարը և նրա գիտական աստիճանը,
- ✓ աշխատանքի կատարման տարեթիվը:

• **Բովանդակություն** - տիտղոսաթերթին հաջորդում է բովանդակությունը, որտեղ ներկայացվում են աշխատության բաժինների, գլուխների և ենթաբաժինների վերնագրերը՝ համապատասխան էջերի համարներով: Բովանդակության վերնագրերը պետք է ամբողջությամբ համընկնեն տեքստում օգտագործվող վերնագրերի հետ, պետք է պահպանվի հստակ կառուցվածքային հիերարխիա և միատեսակ համարակալում՝ հեշտ որոնում ու համակարգված ընկալում ապահովելու համար:

• **Ներածություն** - ներածությունը գիտական աշխատանքի հիմնարար բաղադրիչն է, որը ներառում է.

- ✓ թեմայի արդիականության հիմնավորումը,
- ✓ հետազոտության նպատակի և առաջադրված խնդիրների ձևակերպումը,
- ✓ հետազոտության օբյեկտն ու առարկան,
- ✓ մեթոդաբանական հիմքը, կիրառված մեթոդները,
- ✓ տեղեկատվության հիմնական աղբյուրները,
- ✓ հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը,
- ✓ առաջ քաշված հիմնական դրույթները:

Բացի վերոնշյալ բաղկացուցիչներից, ներածության մեջ կարևոր է նաև ներկայացնել, թե գիտության տվյալ ոլորտում ինչպիսի նորույթ է պարունակում աշխատանքը, ինչպիսի բացեր կամ չուսումնասիրված խնդիրներ է լրացնում թեման, ինչպես նաև հիմնավորել հետազոտության սահմանափակումները, եթե դրանք առկա են:

• **Հիմնական մաս** - Գիտական աշխատանքի հիմնական մասի գլուխներում մանրամասն ուսումնասիրվում է հետազոտության մեթոդաբանությունն ու տեխնիկան, ընդհանրացվում արդյունքները: Գլուխների բովանդակությունը պետք է լինի հստակ՝ համապատասխանի աշխատանքի թեմային, ունենա ներքին ամբողջականություն և տրամաբանական կառուցվածք: Գլուխների միջև պետք է ապահովված լինի հաջորդականություն, որպեսզի գաղափարների զարգացումը լինի համակարգված և ամբողջական:

Գլուխների ներսում նյութը բաժանվում է պարագրաֆների: Յուրաքանչյուր պարագրաֆ պետք է արտահայտի մեկ հիմնական գաղափար և ունենա իմաստային ամբողջականություն: Գլուխ-պարագրաֆ հարաբերակցությունը պետք է ձևավորվի այնպես, որ պարագրաֆներում ներկայացված բոլոր հարցերը բխեն գլխի հիմնական գաղափարից: Պարագրաֆների մասնատման դեպքում բաժանման հիմնական հատկանիշը պետք է լինի միասնական և հետևողականորեն պահպանվի՝ չփոխարինելով մեկ այլ հատկանիշով:

• **Եզրակացություն** - Եզրակացությունը աշխատանքի վերջնարդյունքների համակարգված և սինթեզված շարադրանքն է: Այն պետք է ցույց տա, թե որքանով են իրականացվել ներածությունում ձևակերպված նպատակներն ու խնդիրները: Եզրակացության մեջ ձևավորվում է այսպես կոչված «եզրակացության գիտելիքը», ինչը հանդիսանում է նոր նախնական գիտելիք և ներկայացվում է գիտական հանրույթի քննարկմանն ու գնահատմանը: Այս նոր գիտելիքները չպետք է փոխարինվի գլուխների վերջում եզրակացությունների մեխանիկորեն հանրագումարով, այլ պետք է բովանդակի այն նորը, էականը, ինչն արտացոլում և կազմում է հետազոտության վերջնարդյունքը:

Եզրակացությունը պետք է ներառի նաև.

- ✓ աշխատանքի ընդհանուր գնահատականը, դրա գլխավոր իմաստը,
- ✓ ստացված կողմնակի արդյունքները,
- ✓ հետազոտությունից բխող նոր խնդիրները,
- ✓ կիրառված մեթոդների արդյունավետության գնահատումը և դրանց հնարավոր ազդեցությունը վերջնական արդյունքների վրա,
- ✓ աշխատանքի սահմանափակումների վերլուծությունը:

Սա ապահովում է գիտական ազնվություն և մեթոդական թափանցիկություն և հիմք է ստեղծում հետագա ուսումնասիրությունների համար:

• **Մատենագիտական ցանկ** - Եզրակացությունից հետո ներկայացվում է օգտագործված գրականության մատենագիտական ցանկը: Այն արտացոլում է հետազոտողի ինքնուրույն աշխատանքը և այլ աղբյուրների հետ աշխատելու մշակույթը: Տեքստում կատարված յուրաքանչյուր մեջբերում կամ փոխառյալ գաղափար պետք է ունենա հղում: Մատենագիտական ցանկը պետք է ձևավորվի ընդունված չափանիշներին համապատասխան՝ ապահովելով հեղինակների անունների ճիշտ գրություն, հրատարակության ամբողջական տվյալներ և միասնական ձևաչափ:

Անհրաժեշտ է տարբերակել առաջնային և երկրորդային աղբյուրները, գիտական հոդվածները, մենագրությունները, իրավական ակտերը և առցանց ռեսուրսները՝ յուրաքանչյուրն ներկայացնելով համապատասխան ձևով:

• **Հավելվածներ** - Օժանդակ կամ լրացուցիչ նյութերը, որոնք կարող են ծանրաբեռնում աշխատանքի հիմնական մասի տեքստը, սովորաբար տեղադրվում են հավելվածում: Դրանք կարող են ներառել՝

- ✓ փաստաթղթերի պատճեններ,
- ✓ հաշվետվություններ, արձանագրություններ, քաղվածքներ, հարցաթերթիկներ,
- ✓ կանոնակարգերի առանձին դրույթներ,
- ✓ վիճակագրական տվյալներ,
- ✓ աղյուսակներ, գրաֆիկներ, սխեմաներ, պլաններ և այլն:

Հավելվածները ձևակերպվում են աշխատանքի վերջում՝ յուրաքանչյուրն սկսելով նոր էջից: Վերին աջ անկյունում նշվում է «Հավելված» բառը, մի քանի հավելվածների դեպքում՝ դրանք համարակալվում են: Յուրաքանչյուր հավելված պետք է ունենա թեմատիկ վերնագիր: Հիմնական տեքստի և հավելվածների միջև կապն իրականացվում է հղումների միջոցով:

VII. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՈՃԸ

Գիտական աշխատանքը պահանջում է ոչ միայն բովանդակային խորություն, այլև ճիշտ լեզու և ակադեմիական ոճ: Գիտական լեզուն ձևավորվում է հետազոտողի մասնագիտական պատրաստվածությամբ, գիտական մշակույթով, ակադեմիական էթիկայի պահպանմամբ: Ակադեմիական էթիկան պահանջում է ինչպես սեփական, այնպես էլ այլ մասնագետների տեսակետների հիմնավորված ներկայացում և գիտական ճշմարտության որոնում:

✳ **Գիտական տեքստի հիմնական հատկանիշները** - գիտական շարադրանքին բնութագրական են ունենա հետևյալ հիմնական հատկությունները.

✓ **Ավարտվածություն** - յուրաքանչյուր միտք ներկայացված է ամբողջական և հստակ.

✓ **Ամբողջականություն** - թեմայի բոլոր կարևոր կողմերը ընդգրկված են.

✓ **Կապակցվածություն** - գաղափարները ներկայացվում են տրամաբանական հերթականությամբ:

Այս հատկանիշները ապահովում են տեքստի հստակ, համակարգված և համոզիչ ներկայացում, նպաստում են ուսումնասիրության փաստարկվածությանը և տրամաբանական ընկալմանը:

✳ **Տրամաբանական կապի հատուկ ֆունկցիոնալ** - շարահյուսական միջոցները - գիտական տեքստում կարևոր են բառերն ու արտահայտությունները, որոնք ապահովում են մտքերի կապը և նպաստում են ընթերցողի տրամաբանական ընկալմանը: Այս նպատակով օգտագործվում են՝

✓ մտքի զարգացման հաջորդականությունն ապահովող խոսակցական և շարահյուսական միջոցներ՝ «առաջին հերթին», «երկրորդ», «ապա», «այնուհետև», «այսպես», «նշանակում է» և այլն,

✓ հակադրությունն արտահայտող միջոցներ՝ «սակայն», «մինչդեռ», «այնուհանդերձ», «այն դեպքում երբ» և այլն,

✓ պատճառահետևանքային կապն արտահայտող միջոցներ՝ «հետևաբար», «ուստի», «դրա շնորհիվ», «բացի այդ», «միաժամանակ» և այլն,

✓ մտքերի միջև անցում ապահովող միջոցներ՝ «դիտարկենք», «դիմենք», «կանգ առնենք», «անցնենք», «հաշվի առնելով»:

✓ ամփոփում և եզրահանգում ապահովող միջոցներ՝ «այսպիսով», «հետևաբար», «ամփոփելով», «եզրափակելով նշենք»:

★ **Գիտական լեզվի նպատակաուղղվածությունը և պրագմատիկ կարգավորումը** - սա ենթադրում է, որ գիտական տեքստը պետք է ներառի միայն **ճշգրիտ, փաստահեն** տվյալներ, իսկ զգացմունքային կամ սուբյեկտիվ լեզվական տարրերը չեն կարող զբաղեցել կենտրոնական տեղ և ազդել նյութի մեկնաբանության վրա:

★ **Գիտական լեզվի ոճաբանական առանձնահատկությունները** - գիտական տեքստի շարադրանքի օբյեկտիվությունը մեծապես պայմանավորված է ներածական բառերի օգտագործմամբ, ինչպես նաև բառակապակցությունների կիրառմամբ, որոնք ցույց են տալիս տեղեկատվության հավաստիության աստիճանը կամ մատնանշում աղբյուրը: Այդպիսի ձևակերպումներ են, օրինակ՝ «ըստ աղբյուրի», «ըստ տեղեկությունների», «ըստ տվյալների», «ըստ կարծիքի», «ըստ մեր գնահատականի» և այլն: Դրանք թույլ են տալիս տարբերակել հեղինակի դատողությունը այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունից և ապահովում են գիտական տեքստի ստանդարտ կառուցվածքը:

Գիտական խոսքի գրավոր ոճը հաճախ բնութագրվում է որպես անդեմ մենախոսություն, որը հիմնականում ուղղված է նյութի ներկայացմանը, վերլուծությանը և եզրակացությունների ձևակերպմանը: Այդ պատճառով գիտական տեքստերը հիմնականում ներկայացվում են երրորդ դեմքով: Միևնույն ժամանակ գիտական աշխատություններում հաճախ կիրառվում է նաև «մենք» դերանունը, որը հնարավորություն է տալիս հեղինակին սեփական կարծիքը ներկայացնել ոչ միայն որպես անհատական դիրքորոշում, այլև որպես գիտական խմբի կամ գիտական ուղղության ընդհանուր տեսակետ:

★ **Գիտական խոսքի հիմնական պահանջները** - գիտական հետազոտության լեզվին ներկայացվում են երեք հիմնական պահանջներ՝

- ✓ **Ճշգրտություն** - յուրաքանչյուր արտահայտություն պետք է հստակ արտահայտի իրականության ընկալումը,
- ✓ **Պարզություն**- նյութը պետք է մատուցվի հասկանալի ձևով,
- ✓ **Հակիրճություն** – նյութը պետք է ներկայացվի անհրաժեշտ նվազագույն բառերով:

★ **Գրականության ցանկը գիտական աշխատանքում** - գրականության ցանկը գիտական աշխատանքի կարևոր բաղադրիչներից է, որը ներկայացնում է այն աղբյուրները, որոնցից օգտվել է հեղինակը հետազոտության ընթացքում, և որոշակի չափով բնութագրում է գիտական

աշխատանքի գիտական էթիկայի և մշակույթի արտահայտման մակարդակը: Միևնույն ժամանակ, գրականության ցանկը ոչ միայն աղբյուրների ցուցակ է, այլև ապահովում է աշխատանքում օգտագործված տվյալների ստուգելիությունը և թափանցիկությունը, ընթերցողին հնարավորություն տալով ծանոթանալ օգտագործված աղբյուրներին և գնահատել դրանց հավաստիությունը:

Գրականության ցանկը պետք է պարունակի միայն այն աղբյուրները, որոնք փաստացի օգտագործվել են աշխատանքում, քանի որ չօգտագործված աղբյուրների ներառումը խախտում է գիտական էթիկայի սկզբունքները և կարող է դիտարկվել որպես ձևական կամ ոչ արժանահավատ մոտեցում հետազոտությանը:

Գրականության ցանկի ձևավորման եղանակները՝

- ըստ հեղինակների կամ վերնագրերի այբբենական կարգի,
- ըստ թեմատիկ բաժանումների,
- ըստ հրատարակությունների,
- ըստ խառը կառուցակարգի:

Ըստ այբբենական կարգի ձևավորման դեպքում սկզբում թվարկվում է գիտական աշխատանքի լեզվի տեղեկատվական աղբյուրները, այնուհետև՝ արտասահմանյան:

Գրականության ցանկի ձևավորման ժամանակ անհրաժեշտ է նաև ապահովել՝

1. աղբյուրների միատեսակ գրանցման ձևաչափ,
2. տվյալների ճշգրտություն և ամբողջականություն,
3. հղումների և գրականության ցանկի միջև համապատասխանություն,
4. ինչպես նաև միջազգային և տեղական չափանիշների պահպանում (օրինակ՝ APA, MLA, Chicago, ГОСТ և այլն):

Էլեկտրոնային աղբյուրների դեպքում պետք է պարտադիր նշվի հեղինակ (եթե առկա է), նյութի վերնագիրը, կայքի հասցեն (URL) և դիմելու ամսաթիվը: Այսպիսով, ճիշտ կազմված գրականության ցանկը ապահովում է գիտական աշխատանքի աղբյուրների հստակ և համակարգված ներկայացումը, բարձրացնում է աշխատանքի գիտական արժանահավատությունը և արտահայտում հեղինակի ակադեմիական մշակույթը:

